Ղալաթու ևս անդ եկին ի տուն Տէր Ոհանին, և անդի գնացաք ի սէյիր և անդ օթեցաք զգիշերն։ Ի պալատ և ի պարտէզ Սիաւուշ փաշային և Ղալաթացիք գնացին։

Եւ ես առաւօտուն (14 Մայիս) եկի։ Երեկոյիս Տաճիկք արբեալ գինով երթան զճանապարհս իւրեանց, և ի ճանապարհին խաղալով ընդ միմեանս՝ հարկանէ մինն զմինն և անկեալ սատակի, և զմիւսն ևս ըմբռնեալ տանին ի վէզիրն, և հրաման տայ և գնա կախել ի նոյն տեղւոջ ուր ոճիրն գործեցաւ ի ձեռաց նոցա՝ առ ի Վլանկա։

Դշի (16 Մայիս). զՊուրսայու Տէր Պետրոսն ի տուն մեր բերաք, զի անցեալ Եշին եկեալ էին ընդ այլ քահանայիցն իւրեանց և ընդ մեր Տէր Յակոբիւն։ Եւ օրս զՏէլլաքն փոխեցին և ետուն զզափուտանութիւն Զուռնաղանին։

Ուրբաթի օրս (18 Մայիս) Հաճի Մարտիրոսին քոյրն մեռաւ և Շալղամօղլու Խոտավէրտին մեռաւ. և օրս Տէրտէրն ի յէֆէնտոյ տունն գնաց, զխարճ տանն հսապ արասցեն։ Եւ օրս ի վերի երկրէն մարդ եկն ըսփէնճ առնուլ ի գեղացոց։

Ի–իս օր Կիրակի. Էֆէնտոնցն գնացաք, զի ուներին ինչս բերեալ ի տեղաց յոր եկին, եթէ առցուք ի տեղս դրամի. ոչ եղև։

Բշի (21 Մայիս). Պուրսացիք գնացին։

ԻԴ–իս օր Եշի. Համբարձում Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Այգուցս (25 Մայիս) Տէրտէրն և Մղտեսին ի գիւղն գնացին զՍիմաւոնն կարգել։ Եւ երեկոյիս անդ ի ծովեզրն էաք հանդերձ վարդապետին իմ Տէր Յովանէսին. եկն զափուտանն զոր էր ի կողմս Ուռումելոյ, անտի գնացեալ ի Պօղազն և հարցուկս եղեալ ծովուցն և թշնամոյն իւրեանց և անդ մտեալ ի նաւս զատբրզայից և եկն ի դուռս սահմանացն մեր։